ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 70-ԱՄՅԱԿԻՆ

2013 թ. հոբելյանական տարի է ինչպես Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ողջ անձնակազմի, այնպես էլ Պատմության ինստիտուտի համար: Մանավանդ որ ինստիտուտը հիմնադրվել է ակադեմիայի հետ միաժամանակ՝ 1943 թ. նոյեմբերի 29-ին:

Պատմության ինստիտուտի 70-ամյա հոբելյանին էր նվիրված ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների հերթական՝ XXXIV գիտական նստաշրջանը, որը տեղի ունեցավ 2013 թ. հուլիսի 4–7-ը: Պատմության ինստիտուտի երիտասարդ աշխատակիցներից, ասպիրանտներից ու հայցորդներից բացի, գիտաժողովին մասնակցում էին ներկայացուցիչներ նաև ԵՊՀ-ից, Մատենադարանից, ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնից:

Գիտական նստաշրջանի բացումը և առաջին նիստը տեղի ունեցավ 2013 թ. հուլիսի 4-ին Պատմության ինստիտուտի նիստերի դահլիճում: Բացման խոսքով հանդես եկավ ինստիտուտի տնօրեն, ԳԱԱ թղթակից անդամ Աշոտ Մելքոնյանը*: Նա կարևորեց երիտասարդական նստաշրջանները՝ որպես առաջնակարգ դպրոց, որը երիտասարդ գիտաշխատողներին հնարավորություն է տալիս ինքնադրսևորվելու և գիտության մեջ առաջին քայլերը կատարելու: «Ինքս էլ, լինելով ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ, 1986 թ. հայտնվեցի Պատմության ինստիտուտում շնորհիվ երիտասարդ գիտաշխատողների խորհրդի գիտական նստաշրջանի՝ հանդես գալով Էրզրումի նահանգի Երգնկա գավառի ժողովրդագրությանը նվիրված զեկուցումով», – նշեց Ա. Մելքոնյանը:*

Այնուհետև գիտաժողովի մասնակիցներին ողջունեց ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Սուվարյանը*: Փաստելով, որ Պատմության ինստիտուտը Գիտությունների ակադեմիայի ամենաարգասաբեր աշխատող հաստատություններից է, նա շեշտեց, որ այսօրվա պատմաբանների, հատկապես երիտասարդների համար կա աշխատանքի հսկայական դաշտ, շատ են անելիքները, որովհետև պատմությունը շատ դինամիկ զարգացող գիտություն է: Վստահություն հայտնելով, որ ինստիտուտում ստեղծված լավ ավանդույթների հիմքի վրա երիտասարդ սերունդը, անպայման, կհասնի նոր նվաճումների, Յու. Սուվարյանը եզրափակեց. «Ես արդեն երրորդ անգամ եմ մասնակցում երիտասարդ պատմաբանների հերթական գիտաժողովին՝ միշտ բազմաբնույթ և արդիական թեմատիկայով: Այսօր էլ բացառություն չէ, և ինձ մնում է միայն հաջողություն մաղթել գիտաժողովի մասնակիցներին՝ ցանկանալով ստեղծագործական նոր նվաճումներ»:*

Ողջույնի խոսքից հետո ելույթ ունեցավ Պատմության ինստիտուտի երկարամյա աշխատակից, պատմ. գիտ. դոկտոր Կլիմենտ Հարությունյանը*: Նա ներկայացրեց ինստիտուտում 1970 թ. անցկացված երիտասարդ գիտաշխատողների 5-րդ գիտական նստաշրջանի զեկուցումների հիմնադրույթներն ամփոփող գրքույկը, ընթերցեց այդ գիտաժողովի մասնակիցների անունները, նաև հուշեր պատմեց 1970-ականներին կազմակերպված գիտաժողովների մասին՝ համեմատելով այժմ անցկացվողների հետ:*

Այնուհետև նիստավար, ինստիտուտի փոխտնօրեն, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ Կարեն Խաչատրյանն *իր խոսքում նշեց, որ դահլիճում ներկա գտնվող ավագ սերունդը նույնպես անցել է այս ճանապարհով և չկա որևէ գիտաշխատող, որն իր գիտակրթական ուղու շրջանակներում ելույթ ունեցած չլինի երիտասարդական գիտաժողովում, որովհետև դա նաև փորձություն է: Այստեղ են երիտասարդները փորձ հավաքում, իրենց գիտական պրպտումների արդյունքը ներկայացնում գիտական հասարակայնությանը: Իսկ լավագույն զեկուցումները հրատարակվում են:*

Առաջին նիստում ընթերցվեց չորս զեկուցում: Ինստիտուտի Երիտասարդ գիտաշխատողների խորհրդի նախագահ, պատմ. գիտ. թեկնածու Համո Սուքիասյանը *ներկայացրեց զեկուցում «ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների խորհրդի անցած ուղին և առաջիկա անելիքները» թեմայով: Նշվեց, որ 1970 թ. սկսած ավանդույթ դարձավ նստաշրջաններում ընթերցված զեկուցումների հիմնադրույթների տպագրությունը, իսկ 1997 թվականից նստաշրջանների լավագույն զեկուցումները հրատարակվում են ինստիտուտի «Հայոց պատմության հարցեր» տարեգրքում: Զեկուցողը հակիրճ անդրադարձավ անցկացված 33 գիտական նստաշրջաններին, ինստիտուտի Երիտասարդ գիտաշխատողների խորհրդի գործունեությանը, առաջիկա ծրագրերին: Նա վերջում փաստեց, որ, տասնամյակների ընթացքում ձևավորված ավանդույթի համաձայն, նստաշրջաններում ինստիտուտի երիտասարդները հաշվետվություն են ներկայացնում նախորդ տարիներին կատարած աշխատանքների մասին, խորհուրդներ ստանում ավագ գործընկերներից: Ինստիտուտի հայցորդ* Հարություն Խուդանյանը *«20-րդ դարի երկրորդ կեսին Արձնիքում հայտնաբերված բրոնզեդարյան և երկաթեդարյան հնավայրերը՝ որպես պատմամշակութային ժառանգության բաղկացուցիչ» թեմայով զեկույցում անդրադարձավ վերջին տասնամյակներում պատմական Հայաստանի Արձնիք նահանգի տարածքում կատարված հնագիտական ուսումնասիրություններին: Զեկուցողը շեշտեց, որ թուրք և եվրոպացի մասնագետների կատարած այդ ուսումնասիրությունները «մեզմ ասած զերծ չեն մնացել կանխակալ և միակողմանի մոտեցումից», իսկ հայ մասնագետները զուտ քաղաքական շարժառիթներով չեն ներառվում նմանօրինակ նախագծերում: Ինստիտուտի հայցորդ* Հայկ Մարտիրոսյանի *զեկուցումը նվիրված էր 1921 թ. փետրվարյան ապստամբության շրջանում Հովհաննես Քաջազնունու գործունեությանը: Նա նշեց, որ Քաջազնունուն բոլշևիկները ձերբակալել են ոչ թե 1921 թ. փետրվարի 9-ի լույս 10-ի գիշերը, այլ փետրվարի 12-ին: Բանտից ազատվելուց հետո ակտիվորեն մասնակցել է Հայրենիքի փրկության կոմիտեի աշխատանքներին, նշանակվել*

քաղաքացիական կռվի զոհերի թիվը ճշտող և նրանց ընտանիքներին օգնող հանձնախմբի նախագահ, իսկ ապստամբության պարտությունից հետո անցել Պարսկաստան: Այնուհետև ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի հայցորդ Կարեն Մկրտչյանը *զեկուցում ներկայացրեց «ՀՀ–ԻԻՀ հարաբերություններում առաջացած մի քանի հարցերի շուրջ (1992–1994 թթ.)» թեմայով՝ անդրադառնալով Ղարաբաղյան հակամարտության ընթացքում Շուշիի ազատագրման ու Լաչինի միջանցքի բացման և 1994 թ. Արցախի տարածքում իրանական ինքնաթիռի կործանման պատճառով հայ-իրանական դիվանագիտական հարաբերություններում առաջացած լարվածությանը: Հիշյալ դեպքերը, սակայն, չխանգարեցին երկու պետությունների հետագա բարիդրացիությունը:*

Գիտական նստաշրջանի հաջորդ նիստերը տեղի ունեցան ԳԱԱ Արզականի գիտաժողովների տանը:

Հուլիսի 5-ին տեղի ունեցավ նստաշրջանի երկրորդ նիստը: Այն վարում էր ինստիտուտի Հին դարերի պատմության բաժնի վարիչ, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Էդուարդ Դանիելյանը*: Նիստի սկզբում ողջույնի ելույթով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս* Վլադիմիր Բարխուդարյանը*: Նա ճակատագրի մեծ պարգև համարեց, որ, որպես գիտքարտուղար, 1962 թ. մասնակցել է երիտասարդ գիտաշխատողների անդրանիկ նստաշրջանի կազմակերպմանը և դրանից հինգ տասնամյակ անց ողջունում է արդեն XXXIV նստաշրջանի մասնակից երիտասարդներին: Անվանի պատմաբանը երիտասարդներին հորդորեց անմնացորդ նվիրվել գիտությանը, փոքր անհաջողություններից չհուսահատվել, այլ համբերատար, հետևողականորեն խորանալ ընտրած թեմայի մեջ:*

Նիստի ընթացքում ընթերցվեց չորս զեկուցում: Ինստիտուտի հայցորդ Ալիսա Դումիկյանը *զեկուցեց «Գուգարաց բդեշխության նշանակությունը Հայաստանի հյուսիսարևելյան սահմանների պաշտպանության խնդրում ըստ XIX դարի ֆրանսիացի հայագետների» թեմայով: Նա կարևորեց ֆրանսիացի հայագետների այն տեսակետը, ըստ որի՝ բդեշխները պետք է Գուգարք նահանգը «պաշտպանեին վրացիների և հյուսիսի ժողովուրդների ներխուժումներից»: Նշվեց նաև, որ սկզբնաղբյուրներում հիշատակվող «Բդեշխ Վրաց» տիտղոսաձևը «Գուգարաց բդեշխ» տիտղոսի կողքին ոչ թե էթնո-տարածքային, այլ Սասանյանների վարած վարչաքաղաքական բաժանումների հետևանք էր: Մատենադարանի աշխատակից* Արմինե Մելքոնյանը *«Դավիթ Անհաղթի՝ խաչին նվիրված ներբողի ստեղծման ժամանակը և պատմական միջավայրը» զեկույցում անդրադարձավ Հայաստանում V դարի երկրորդ կեսին գոյություն ունեցող պատմաքաղաքական-կրոնական իրավիճակին՝ այդ համատեքստում քննելով Դավիթ Անհաղթի՝«Բարձրացուցէք» անվամբ հայտնի ներբողի գրման վերաբերյալ տեղեկություններ պարունակող Նախադրությունը: Զեկուցողն ուշադրության արժանի ընդհանրություններ մատնանշեց Դավիթ Անհաղթի՝ Գյուտ Ա Արահեզացի կաթողիկոսին և Մովսես Խորենացու՝ Սահակ Բագրատունի իշխանին ուղղված նամակների, նաև «Բարձրացուցէք»-ի ու «Պատմութիւն Հայոց»-ի գրության ժամանակների ու հանգամանքների միջև՝ Ներբողի գրությունը մոտավոր թվագրելով 478–484 թթ. միջակայքում: Ինստիտուտի հայ-*

ցորդ Լիանա Նազարյանը *««Տայք» երկրանունը ըստ բյուզանդական և արաբական աղբյուրների» զեկույցում նշեց, որ բյուզանդական աղբյուրներում Տայքի առնչությամբ գործածվող «Իբերիա» եզրը գերազանցապես պայմանավորված է դավանական գործոնով (IX–XI դդ. Տայքում, ինչպես և Վրաց պետությունում տարածված էր քաղկեդոնականությունը): Իսկ արաբական աղբյուրները Տայքը ներկայացնում են Շիրակի հետ՝ կոչելով Միրաջթայր, այսինքն՝ Շիրակ-Տայք: Պատմ. գիտ. թեկնածու* Մարիամ Գրիգորյանը *զեկուցում ներկայացրեց «Հայոց թագուհիների և իշխանուհիների դերակատարությունը Բագրատունյաց Հայաստանում» թեմայով: Նա փաստեց, որ Հայոց թագուհիներն ու իշխանուհիները կարևոր դեր են խաղացել եկեղեցաշինության, նվիրատվություններ կատարելու, հոգևոր խնդիրների կարգավորման, նաև հասարակական նշանակության շինությունների կառուցման գործում: Բացի այդ՝ նրանք երբեմն միջամտել են պետական գործերին, իրականացրել դիվանագիտական առաքելություններ:*

Երրորդ նիստը վարում էր ինստիտուտի Միջին դարերի պատմության բաժնի գիտաշխատող, պատմ. գիտ. թեկնածու Զոհրաբ Գևորգյանը*: «Կիլիկյան Հայաստանը վաղ վերածննդի դարաշրջանի գրական հուշարձաններում (Ջ. Բոկաչչո, «Դեկամերոն», Ջ. Չոսեր, «Քենտերբերյան պատմվածքներ»)» խորագրով զեկույցում նա փաստեց, որ Կիլիկյան Հայաստանի համբավը Եվրոպայում այնքան մեծ էր, որ նրա մասին գրում էին ոչ միայն ճանապարհորդներն ու քարոզիչները, այլև վաղ Վերածննդի դարաշրջանի գեղարվեստական գրականության հայտնի ներկայացուցիչները: Եվրոպական իրականության մեջ Կիլիկյան Հայաստանի մասին ձևավորել էին հեքիաթային պատկերացումներ, ինչն իր արտահայտությունն է գտել «Դեկամերոն»-ում: Այդուհանդերձ, Բոկաչչոյի հիշատակումներից կարելի է երևան հանել նաև պատմական որոշակի ստույգ փաստեր: Զեկուցողն անդրադարձավ նաև «Քենտերբերյան պատմվածքներ»-ում Կիլիկյան Հայաստանի խոշորագույն նավահանգիստ Այասի հիշատակմանը: ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող, պատմ. գիտ. թեկնածու* Արկադի Ակոպովը *զեկուցում ներկայացրեց «Ժողովրդագրական ճգնաժամի խորացումը Բանակի գավառում (XVI դարի վերջ – XVIII դարի առաջին կես)» թեմայով: Անդրադառնալով Ախալցխայի նահանգի Բանակի գավառի վարչաժողովրդագրական կացությանը՝ զեկուցողը փաստեց, որ գավառում ժողովրդագրական ճգնաժամի խորացմանը նպաստում էին թուրք-պարսկական հարատև պատերազմներն ու դրանց ուղեկցող հայ բնակչության զանգվածային բռնագաղթերը, օսմանյան կառավարության վարած տնտեսական քաղաքականությունը: Այսպես՝ 100 տարվա ընթացքում հարկային բեռը քրիստոնյա բնակչության համար ծանրացել էր 250–300 %-ով: XVII–XVIII դարերում սկսվեց Բանակի գավառի հայ-քաղկեդոնականների բռնի մահմեդականացման գործընթացը: Ժողովրդագրական ճգնաժամի դրսևորումներից էր նաև բնակավայրերի թվի նվազումը: Ինստիտուտի հայցորդ* Հրաչյա Փանոսյանը *«Ժողովրդագրական գործընթացները Նախիջևանի երկրամասում (XVII–XVIII դդ.)» զեկույցում տարաբնույթ աղբյուրների օգտագործմամբ*

ցույց տվեց, որ պարսկական իշխանությունների կողմից հայ բնակչության նկատմամբ իրականացված բռնագաղթի, ինչպես նաև կրոնական, ազգային և տնտեսական ծանր քաղաքականության հետևանքով XVII–XVIII դդ. ընթացքում սկսեց փոխվել Նախիջևանի երկրամասի էթնիկական պատկերը՝ ի վնաս տեղաբնիկ հայ բնակչության: Ինստիտուտի հայցորդ Գայանե Շախկյանը *«XIX դարի գերմանական ուղեգիրների տեղեկությունները Արևմտյան Հայաստանի Էրզրում և Երզնկա քաղաքների մասին» զեկույցում ներկայացրեց հետազոտություններ կատարելու նպատակով Արևմտյան Հայաստան այցելած գերմանացի գիտնականների աշխատություններում հայերի կենցաղի, ժողովրդագրական տեղաշարժերի, հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ եղած տվյալները, որոնք, գրված լինելով ականատեսի լավատեղյակությամբ, ունեն աղբյուրագիտական կարևոր նշանակություն:*

Նստաշրջանի չորրորդ նիստը տեղի ունեցավ հուլիսի 6-ին: Այն վարում էր ինստիտուտի Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության բաժնի վարիչ, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ Արմեն Մարուքյանը*: Ինստիտուտի հայցորդ* Նարինե Երանոսյանը *զեկուցում ներկայացրեց «Եգիպտոսի «Ալ-Մուքաթթամ» օրաթերթի հրապարակումները հայերի կոտորածների և հայ գաղթականների մասին (1889–1896 թթ.)» թեմայով: Զեկուցողը նշեց, որ «Ալ-Մուքաթթամ»-ը, թեև հանդիսանում էր Եգիպտոսում բրիտանական շահերի խոսափողը, այդուհանդերձ, հայերի մասին թերթի հրապարակումներն աչքի են ընկնում անկողմնակալությամբ: Բարձրաձայնելով օսմանյան կառավարության կողմից Արևմտյան Հայաստանում ստեղծված ծանր կացության մասին՝ պարբերականը լուսաբանել է Արևմտյան Հայաստանում և կայսրության հայաբնակ բնակավայրերում թուրքական իշխանությունների իրականացրած հայկական կոտորածները, դրանց հետևանքով իրենց հայրենիքից տեղահան եղած հայության խնդիրները, միջազգային հանրության կողմից տրված գնահատականները: Ինստիտուտի հայցորդ* Լիլիթ Քոսյանն *իր զեկույցում անդրադարձավ 1890-ական թվականների համիդյան ջարդերից հետո Երևանի նահանգի Էջմիածնի գավառում ապաստանած արևմտահայ գաղթականների տեղաբաշխմանը և սոցիալ-տնտեսական դրությունը: Զեկուցողը փաստեց, որ գաղթականները ձգտում էին հաստատվել Վաղարշապատում կամ շրջակա գյուղերում, որպեսզի մոտիկ լինեն Ս. Էջմիածնին՝ ակնկալելով, որ կաթողիկոսն առաջին հերթին կօգնի հոգևոր կենտրոնի մերձակայքում ապաստանածներին: Նա նշեց, որ արխիվային վավերագրերի և ժամանակի մամուլի տեղեկությունների հիման վրա կարելի է եզրակացնել, որ 1896–1899 թթ. Էջմիածնի գավառում ապաստանել էր շուրջ 2600 արևմտահայ: Պատմ. գիտ. թեկնածու* Վահրամ Ղարախանյանի *զեկուցումը նվիրված էր հայ անվանի նավթարդյունաբերող Գալուստ Կյուլպենկյանի ունեցած ներդրմանը Իրաքի նավթային ընկերության հիմնադրման գործում, նրա ունեցած մասնաբաժնի ճակատագրին: Պատմ. գիտ. թեկնածու* Հովակիմ Բոյաջյանը *«Պողոս Նուբար փաշան և կիլիկիահայության կողմից ապստամբություն բարձրացնելու հարցը 1913–1915 թթ.» զեկույցում փաստեց, որ թուրքական տիրապետության դեմ արևմտահայության զինված ե-*

լույթների հարցում Պողոս Նուբարի դիրքորոշումը փոփոխություններ է կրել: Եթե Բալկանյան պատերազմի շրջանում նա դեմ էր արտահայտվում հույների օժանդակությամբ Կիլիկիայում ապստամբություն բարձրացնելուն, ապա Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում անգլիացիների՝ Ալեքսանդրետի ծովածոցի շրջան ափհանման դեպքում կիլիկիահայերի ապստամբության համոզված պաշտպաններից էր: Այս երկու ծրագրերն էլ իրականություն չդարձան: Ինստիտուտի աշխատակից Ռեգինա Գալուստյանը *«Հայոց ցեղասպանության կանխամտածվածությունը ըստ մեծ տերությունների դիվանագիտական փաստաթղթերի (1915–1916 թթ.)» զեկույցում նշեց, որ դեռևս 1915 թ. սկզբին օտարերկրյա դիվանագիտական գործիչներն իրենց հաղորդագրություններում փաստում էին թուրքական պետության ներքին քաղաքականության մեջ հայ ժողովրդի բնաջնջման մշակված և հաստատված ուղեգծի առկայությունը: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան կայսրության դաշնակից, չեզոք և հակառակորդ տերությունների դիվանագիտական փաստաթղթերը ցույց են տալիս, որ ցեղասպանության իրականացման գործողությունները նախապես մշակված էին և հետևողականորեն գործադրվում էին:*

Նստաշրջանի վերջին՝ հինգերորդ նիստը վարում էր Համո Սուքիասյանը*: «Բյուրոկրատիզմի դրսևորումները Խորհրդային Հայաստանում 1920–1930-ական թթ.» զեկույցում ինստիտուտի հայցորդ* Գագիկ Ժամհարյանը *փաստեց, որ խորհրդահայ քաղաքացու առօրեական կյանքը, հանգիստը, ամենօրյա աշխատանքային գործունեությունն անխուսափելի կախվածության մեջ էր խորհրդային համապատասխան հիմնարկությունների գործունեությունից, որի կազմակերպումը պետությունը և իշխող կոմունիստական կուսակցությունն իրականացնում էին առանձնահատուկ վարչահրամայական մեթոդներով: Պատմ. գիտ. թեկնածու* Հովհաննես Ալեքսանյանը *«Հայկական ազգային շրջանները և գյուղական խորհուրդները ՌԽԴՍՀ-ում» զեկույցում անդրադարձավ 1920-ական թվականներին Խորհրդային Ռուսաստանում ձևավորված հայկական ազգային շրջանների [Հայկական ազգային շրջան (1925–1953 թթ.)՝ Հյուսիսկովկասյան երկրամասի Մայկոպի օկրուգի կազմում, Մյասնիկյանի ազգային շրջան (1926–1963 թթ.)՝ Դոնում] ու ազգային գյուղխորհուրդների դերին ու նշանակությանը՝ հայության համախմբման, ազգային լեզվի, մշակույթի պահպանման գործում: Ազգային ինքնավարության այս միավորները միտված էին մասամբ բավարարելու ազգային պահանջմունքները՝ խնդիր ունենալով ազգային փոքրամասնություններին ներգրավել խորհրդային շինարարության մեջ: Ինստիտուտի հայցորդ* Նարինե Հովսեփյանի *զեկուցումը ևս առօրեական պատմության թեմատիկայով էր: Հայրենական մեծ պատերազմի ծանրագույն պայմաններում խորհրդահայ գյուղի դպրոցական առօրյային նվիրված զեկույցում նա փաստեց, որ, բնակչության նյութական վիճակի կտրուկ վատթարացմամբ պայմանավորված, երեխաները զրկվեցին կյանքի տարրական պայմաններից: Նրանք մտան ծանր բեռի տակ և կատարեցին մեծահասակներին վերապահված աշխատանքներ: Չնայած եղած դժվարություններին՝ հայկական դպրոցներում ընդհանուր պարտադիր ու-*

սուցումն իրականացվեց, նույնիսկ շահագործման հանձնվեցին մեկ տասնյակից ավել դպրոցական շենքեր: Ինստիտուտի հայցորդ Նվարդ Սեդրակյանի *զեկուցումը նվիրված էր 1992 թ. Շուշիի ազատագրման և ՀՀ-ի ու Լ.ՂՀ-ի միջև ցամաքային կապի հաստատման իրադարձությունների լուսաբանմանը Մերձավոր Արևելքի երկրների հայկական մամուլում: Զեկուցողը փաստեց, որ նշյալ իրադարձությունները լայն արձագանք են գտել Բեյրութի «Ազդակ», Ստամբուլի «Մարմարա», Թեհրանի «Ալիք», Կահիրեի «Արև» և «Հուսաբեր» թերթերում: Գիտաժողովի եզրափակիչ զեկուցումը ներկայացրեց ինստիտուտի հայցորդ* Արծրուն Հովհաննիսյանը*: «Արցախյան պատերազմի 1993 թ. շրջափուլի ռազմարվեստի առանձնահատկությունները» վերնագրված զեկույցում նա անդրադարձավ Աղդամի, Ֆիզուլիի, Ջեբրայիլի, Ղուբաթլուի, Զանգելանի ազատագրման մարտերին: Վերլուծելով 1993 թ. պատերազմաշրջանը՝ զեկուցողը եզրակացրեց, որ այն նախորդ տարիների մարտական գործողություններից տարբերվում էր նրանով, որ մեզանում առաջին անգամ կիրառվեց «Կառավարվող ապակենտրոնացում» մարտավարությունը, ինչը կարևոր նորամուծություն էր և նպաստեց հաղթանակներին:*

Զեկուցումների ավարտից հետո տեղի ունեցավ աշխույժ քննարկում, հարց ու պատասխան: Ելույթ ունեցան Կարեն Խաչատրյանը, Վլադիմիր Բարխուդարյանը, Էդուարդ Դանիելյանը, Արմեն Մարուքյանը, *ինստիտուտի Նորագույն պատմության բաժնի վարիչ, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր* Համլետ Հարությունյանը, *պատմ. գիտ. դոկտոր* Էմմա Կոստանդյանը, *պատմ. գիտ. թեկնածու* Գասպար Կիրակոսյանը, *ովքեր անդրադարձան զեկուցումների թեմաներին, կատարեցին առաջարկներ ու դիտողություններ: Վերջում ինստիտուտի տնօրեն* Աշոտ Մելքոնյանն *ամփոփեց գիտական նստաշրջանի արդյունքները, իր գոհունակությունը հայտնեց, որ անցնող տարիների ընթացքում ինստիտուտի երիտասարդ աշխատակիցները փորձառություն են ձեռք բերել, հմտացել իրենց թեմաներում: Այնուհետև նա գիտաժողովի մասնակցության հավաստագրեր հանձնեց մասնակիցներին ու տեղեկացրեց, որ ներկայացված լավագույն զեկուցումները կհրատարակվեն Պատմության ինստիտուտի «Հայոց պատմության հարցեր» տարեգրքի 14-րդ համարում:*

ՀԱՄՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ